

# ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ

## ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ԸԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Փետրուար 2021



### ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

387ին, Բիզանդական եւ Սասանեան կայսրութիւնները իրենց միջեւ կը բաժնեն Հայաստանը. բիզանդացիք իրենց տիրապետութեան տակ գտնուող Արեւմտեան Հայաստանի մէջ անմիջապէս վերջ կու տան հայկական իշխանութեան. սասանեանները նոյնը կ'ընեն իրենց հեղինակութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանի մէջ, 428ին, այսպիսով, վերջ կը գտնէ Արշակունիներու թագաւորութիւնը: Պարսիկները այնուհետեւ Հայաստանը կը կառավարեն նշանակեալ մարզպետներով:

Երբ Յազկերտ Բ. (439-457) գահ կը բարձրանայ, կը փորձէ հայերուն պարտադրել, որ ուրանան քրիստոնէութիւնը եւ մագդէական կրակապաշտութիւնը ընդունին: Հայոց աւագանին, Յովսէփ Հողոցմեցիի նախագահութեամբ, Արտաշատի մէջ ժողով մը գումարելով, կտրականապէս կը մերժէ Յազկերտի պահանջը: Շուրջ երկու տարուան պատրաստութիւններէ ետք, հայ եւ պարսիկ ուժերու գլխաւոր ճակատամարտը տեղի կ'ունենայ Արտազ գաւառի Աւարայրի դաշտին մէջ, 451 թուի Մայիս 26ին: Հայոց 60 հազար քաջարի բանակը, գլխաւորութեամբ հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանի, «վասն հաւատոյ եւ հայրենեաց» սպարապետին խիզախ ու հայաշունչ ճառով, դէմ կ'ելլեն պարսկական 300 հազարի հասնող հզօր բանակին, քաջ գիտնալով, որ հաւատքի ու հայրենիքի պաշտպանութեան ի խնդիր «իմացեալ մահը՝ անմահութիւն է»: Այս պատերազմին, հայկական բանակը զոհ կու տայ իր դիւցազն սպարապետը՝ Վարդան Մամիկոնեանը՝ իր 1036 զինակակիցներով, որոնց շարքին նախարարներ: Իսկ պարսիկներ մօտ չորս հազար մեռեալ կը ձգեն Տղմուտի ափերուն:

Աւարայրի ճակատամարտէն ետք, ուխտապահ նախարարներու առաջնորդութեամբ, հայեր լեռներու եւ բերդերու մէջ ամրացած կը շարունակեն դիմադրութիւնը: Յազկերտի յաջորդ Պերոզի (458-484) թագաւորութեան ամբողջ ժամանակաշրջանին, գրեթէ երեսուն տարի, հայեր զանազան ճակատներու վրայ հրոսակային (ֆետայական) յարձակումներով դիմադրական պայքարներ կը մղեն, գլխաւորութեամբ՝ Վահան Մամիկոնեանի: Ի վերջոյ, Պերոզի յաջորդը՝ Վաղարշ արքան, կը ստիպուի հայերու հետ հաշտութեան դաշինք կնքել եւ ընդունիլ հայոց պայմանները:

Նահատակ Վարդանի եղբորորդիին՝ Վահան Մամիկոնեանի յաղթանակները պատճառ կ'ըլլան որ Վաղարշ արքան 484ին Նուարսակի մէջ խաղաղութեան դաշինք կնքէ, ըստ որուն՝ հայերը ազատութիւն կը շահին իրենց Աստուածը անկաշկանդ պաշտելու, ազգային աւանդութիւնները պահելու եւ հայրենի օրէնքներն ու արդարութիւնը վերահաստատելու, այն ինչ որ տեսլականն էր Վարդանի եւ Աւարայրի դաշտին մէջ մարտնչող իւրաքանչիւր հայրենապահական զինուորի:

Վահան մարզպան կը նշանակուի եւ մինչեւ իր մահը՝ 510 թուական, խաղաղութեամբ կը կառավարէ Հայաստանը: Հայոց Եկեղեցին, իր գերագոյն գնահատանքը շնորհելով նահատակներուն, միանգամայն սրբագործած է բոլորը՝ Սրբոց Վարդանանց հաւաքական պատուանունով:





## Սրբոց Ղեւոնդեանց տօն

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ ուշագրաւ եւ իւրայատուկ նշանակութիւն ունեցող տօն մըն է Սրբոց Ղեւոնդեանց տօնը, որ ամէն տարի կը նշուի Վարդանանց տօնը կանխող Երեքշաբթին: Հաւաքական այս անունը՝ Ղեւոնդեանք, խորհրդանիշ է բազմաթիւ արժանատրներու, որոնք իրենց կեանքը զոհած են յանուն քրիստոնէութեան եւ ազգութեան: Անոնք անձնուրաց կրօնատրներ են, որոնք ո՛չ միայն եղած են հակաբռնութեանց քարոզիչներ, այլեւ հաւատքի առաջապահ մարտիկներ:

### ՂԵՒՈՆԴ ԵՆԷՑ

Ղեւոնդ Երեց եղած է համեստ քահանայ մը Վանանդի Իջեւան գիւղին մէջ: Աշակերտած ըլլալով Ս. Մեսրոպի եւ Ս. Սահակ Հայրապետին, ան մաս կազմած է թարգմանչաց փառանգին: Կը նկատուի Ոսկեդարու լուսատր եւ ճառագայթող դէմքերէն մէկը:

Ղ. Երեց յեղափոխական առաջնորդի կեանքը կը սկսի 450-ին: 451-թուի Մայիսին, Ղեւոնդ Երեց Վարդանանց ճակատամարտին կը մասնակցի առաջին գիծերուն վրայ. անկէ ողջ դուրս գալով՝ հետապնդուած, կը քաշուի պարսիկներուն ընդդիմադիր բերդի մը մէջ: Պարսիկներ երկար պաշարուեալէ ետք, խարդախ միջոցներով կը յաջողին ձերբակալել զայն, ինչպէս նաեւ Յովսէփ Կաթողիկոսն ու բազմաթիւ այլ երանելիներ. բոլորը կը տարուին Տիգրոն:

Խոնաւ ու տանջալից բանտերուն մէջ, հայ հոգեւորականները ամիսներ շարունակ հրաշքներով լեցուն կեանք մը կ'ապրին՝ ապաւինած իրենց աղօթքներուն եւ Աստուծոյ: Ղեւոնդ Երեց, Յովսէփ Կաթողիկոս, Սահակ Եպիսկոպոս եւ այլ հոգեւոր հայրեր ստոյգ գիտէին որ իրենց մահապատիժ կը սպասէ, սակայն հաստատ կը մասն իրենց հաւատքին մէջ: Ի վերջոյ մահապատիժը կ'իրագործուի 454-ին եւ անոնք կը դառնան հաւատամարտի նահատակներ:

Ղեւոնդեանց սուրբերու ցուցաբերած կրօնական ամուր հաւատքը, ժողովուրդին հետ անոնց ունեցած անկեղծ գործակցութիւնը, իրենց կենդանի օրինակով խաչով ու սուրով պատերազմիլը, իրենց անսահման նուիրուածութիւնը զանոնք դարձուցած է տիպար հոգեւորականներ, եւ որոնց շնորհիւ, արժանացած են սրբութեան պսակին:



## Բարեկենդան

Բարեկենդան կը նշանակէ բարի կեանք, երջանիկ կեանք: Այնտեղ կը տեսնենք, բնութեան բերքն ու բարիքը շատցնելու, չար ոյժերը չեզոքացնելու նպատակով կատարուող շարք մը ծեսեր: Այս տօնը կը նշուի հեթանոսական ժամանակներէն ի վեր եւ ունի շատ գեղեցիկ սովորութիւններ: Ան նաեւ կը խորհրդանշէ ձմրան աւարտը եւ գարնան գալուստը:

Ժամանակին, Բարեկենդանը կը տօնուէր հայկական բոլոր գաւառներուն մէջ զանազան ձեւերով՝ խաղերով, կերուխումով եւ դիմակներով: Ան կատակով յաճախ կ'անուանուէր «փորեկենդան», որովհետեւ տօնին գլխաւոր յատկանիշը կերուխումն էր:

Որոշ շրջաններու մէջ կ'ընտրէին փաշա մը, որ կը հագնէր գոյնզգոյն հագուստներ, գլխուն կը դնէր հին փափախ մը, դէմքին՝ այծի մազէ պէխ ու մօրուք, կողքին սուր մը, մէջքին ժանգոտած հրացան մը, իսկ կուրծքը կը զարդարէր զանազան ոսկորներով: Ան իշուն վրան ծուռ կը նստէր ու կը շրջէր թաղէթաղ իր «թիկնապահներուն» եւ մունետիկին հետ, որ իր գալուստը կ'աւետէր: Անոնք կը կատակէին, կը ծաղրէին, խնճոյք կ'ընէին եւ կը զուարճացնէին: Այդ օրը մէկը միւսէն նեղուելու իրաւունք չունէր, բոլորը կրնային կատակել, ծաղրել եւ քննադատել: Մինչդէռ, աղջիկները ունէին իրենց յատուկ խաղերը: Օրինակի համար, անոնք գուլպաները կը լեցնէին բուրդով եւ զիրար կը հարուածէին մինչեւ մէկը որեւէ գաղտնիք յայտնէր, կամ սիրած երիտասարդին անունը բացայայտէր: Մէկ խօսքով, Բարեկենդանը ուրախութիւն արտայայտելու տօն է, սիրուած բոլորին կողմէ եւ մինչեւ այսօր բոլորը՝ մասնատրաբար մանուկները, անհամբեր կը սպասեն անոր գալուստը:





ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ

18 Փետրուար 1921: Հայաստանին պիտի տիրապետէին բոլշեւիկները, որոնք նաեւ կը կոչուէին Յեղկոմ, այսինքն՝ Յեղափոխական Կոմիտէ: Յեղկոմը կամ բոլշեւիկները մեջտեղ ելան Ռուսիոյ Յարը տապալելէ ետք: Բոլշեւիկեան այս հօգը շրջանին Հայաստանին իշխող Դաշնակցութիւնը քաղաքացիական բարդութիւններու առիթ չտալու համար իշխանութիւնը պիտի յանձնէր Յեղկոմին օրինական կարգով 1921-ի Դեկտեմբեր 2-ին:

Մակայն երկու եւ կէս ամիս բաւական եղաւ, որպէսզի Յեղկոմի իշխանութիւնը բոլորովին վարկաբեկուի ժողովուրդի աչքին եւ տեղի ունեցար յեղափոխութիւն: Բայց Բոլշեւիկները յամառօրէն կը պնդէն թէ այդ յեղափոխութիւնը նախապատրաստուած էր Դաշնակցութեան կողմէ. տրամաբանութիւնը կը ցուցաբերէ հակառակը. դեռ երկու ամիս առաջ առանց դիմադրելու իշխանութիւնը Բոլշեւիկներուն յանձնող Դաշնակցութիւնը այդ դաժան պայմաններուն չէր կրնար իշխանութիւնը վերագրաւելու նպատակ ունենալ: Եւ փաստը որ Դեկտ. 1-ին Բիւրոն որոշեց, որ քաղաքացիական բարդութիւններու առիթ չտալու համար, Բիւրոյի անդամները հեռանան երկրէն եւ Հայաստան մտայ միայն Սիմոն Վրացեանը, որպէս կուսակցութեան ներկայացուցիչ եւ վերջին կառավարութեան նախագահ: Նոյն որոշումով Հայաստանէն պէտք էր հեռանային շարք մը նախարարներ եւ պատասխանատու գործիչներ, որոնց ներկայութիւնը հաճելի չէր Յեղկոմին: Այդ օրը նաեւ Երեւանէն հեռացան նախկին զինուորական նախարար՝ Ռուբէն Տէր Մինասեան եւ ուրիշներ: Յաջորդ օրը Վրաստանի վրայով արտասահման անցնելու համար Երեւանէն մեկնեցան նախկին վարչապետ՝ Համօ Օհանջանեան, նախկին նախարար՝ Ա. Զիլինջարեան եւ Ա. Արարատեան, խորհրդարանի անդամ՝ Վ. Նաւասարդեան, Երեւանի պարէտ՝ Ա. Շահխաթունի եւ ուրիշներ, որոնց մէկ մասը յաջողեցաւ հասնիլ Թիֆլիս, իսկ միւսերը Օհանջանեան, Զիլինջարեան, Նաւասարդեան ձերբակալուեցան ու բերուեցան Երեւանի բանտը: Ինչպէս նաեւ Հայաստանէն հեռացուեցան Դրօն իր սպաններուն հետ եւ հանրապետական բանակի 1200 զինուորներ արտորուեցան բոլշեւիկներուն ձեռքով:

Դաշնակցութիւնը ի վիճակի էր Բոլշեւիկեան այդ արարքներուն մեծ մասին առաջըր առնելու, նոյնիսկ զէնքի ուժով, բայց ան կը խուսափէր նման քայլի դիմելէ, զգուշանալով որ երկիրը քաղաքացիական կռիւններու ասպարէզ չդառնայ:

Մէկէ աւելի անգամ Ս. Վրացեան՝ կուսակցութեան ներկայացուցիչի եւ նախկին վարչապետի հանգամանքով, դիմումներ ըրաւ Յեղկոմի նախագահ Կասեանին, յորդորելու համար անոնց, որ վերջ տան հալածանքներուն, այլապէս երկիրը կրնայ մատնուիլ քաղաքացիական կռիւններու: Նման դիմում կատարեց գրաւոր զեկուցումով, Հայաստանի անդրանիկ վարչապետ՝ Յովհաննէս Քաջազնունի եւ ամէն անգամ պատասխանը կ'ըլլար նոյնը «Հայաստան պէտք է անցնի քաղաքացիական կռիւններու բովից, պէտք է արիւն հոսի»: Եւ արիւնը հոսեցաւ Դրոյի արտորուելէն եւ մանաւանդ Հայաստանի բանակի սպանները Ռուսաստան տարուելէ յետոյ, երբ Հայաստանի ու Չեկայի բանտերը լեցուած էին բանտարկեալներով, երբ բռնագրաւուեցան եւ ապօրինութիւնները ծայրայեղ աստիճանի հասան: Սկսան յուսահատ ժողովուրդի վրդովումի նշանները: Տեղի ունեցան իշխանութիւններուն ընդդիմութեան դէպքեր, նոյնիսկ բռնագրաւուեցան կամ ձերբակալութիւններու համար եկող կառավարութեան գործակալներու սպանութիւններ, գաւառներէն առաջ եկան գաղտնի խմբակներ:

Մայրաքաղաքին մէջ կազմուեցաւ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անունով մարմին մը, եւ այդ բոլորը զուտ ժողովրդական շարժում էին ինքնապաշտպանութեան բնագոյն մղուած:

Փետրուար 9-ի գիշերը՝ շէնք փոխադրուեցան 200 ձերբակալուածներ մէջն ըլլալով Հայաստանի անդրանիկ վարչապետ Յ. Քաջազնունի, նշանաւոր գրող եւ խորհրդարանի երկրորդ փոխ. նախագահ Լեւոն Շանթ, ակնաւոր քննադատ Նիկոլ Աղբալեան եւ ուրիշներ: Փետրուար 10-ին Երեւան սուգի մէջ էր, ժողովուրդի վրդովումը սահման չունէր եւ զանազան կողմերէն ըմբոստացումները ելան Յեղկոմի դէմ, հետզհետէ միանալով Երեւանի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէին:

Ապստամբութեան ազդանշանը տուին Արագածի սասունցիները, որոնք անուանի խմբապետներու ղեկավարութեամբ դուրս քշեցին իրենց գիւղերու Յեղկոմի գործակալները եւ գրաւեցին Աշտարակը, ապա Էջմիածինը: Միաժամանակ ապստամբութիւնը ծայր առաւ Բաշ Գառնիի շրջանը, տարածուելով դէպի Կոտայք եւ Ախտա: Փետրուարին, Կոտայքի Չառ գիւղին մէջ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն որոշեց ընդհանուր ապստամբութիւն գործադրել: Փետրուար 17-ին մայրաքաղաքը բոլոր կողմերէն շրջապատուած էր ապստամբ ժողովուրդով: Յեղկոմը դիմադրութեան փորձեր ըրաւ, բայց անօգուտ եւ դիմեց փախուստի, իրեն հետ ունենալով յափշտակուած պետական գումարներ, մթերքներ, զէնք ու ռազմամթերք, դէպի Դարմալու՝ միանալու թուրքերուն:

Փետրուար 18-ը յարութեան օր եղաւ Հայաստանի ժողովուրդին համար: Վաղ առաւօտեան, ապստամբները շրջաններէն Երեւան իջան: Չեկայի բանտին դռները բացուեցան, Երեւանի բոլոր շէնքերը զարդարուեցան եռագոյն դրոշակներով. ժողովուրդին համար այս օրը համարուեցաւ, «Ազատութեան Օր»: Մինչ այդ, Երեւանը մաքրուած էր բոլշեւիկներէն, Յեղկոմը վերջին փամփուշտները պարպելով անցաւ Շարուրի ուղղութեամբ, տանելով իրեն հետ զինուորական ռադիոկայան, որով կը հաղորդակցէր Ազրպէյճանի իր կուսակիցներուն հետ:

Փետրուար 18-ի առաւօտեան, խորհրդարանի շէնքին մէջ տեղի ունեցաւ Երեւանի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէին եւ նախկին կառավարութեան անդամներու, խորհրդարանի նախագահի ու անդամներու, ինչպէս նաեւ անհատ պատասխանատու գործիչներու եւ ապստամբ շրջաններէն հասած վարիչներու մասնակցութեամբ ժողով, ուր որոշուեցաւ կեանքի կոչել Վրացեանի կառավարութիւնը, լրացնելով նոր անդամներով՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անունով: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, որ դարձաւ Հայաստանի յեղափոխական շրջանի գերագոյն իշխանութիւնը, բաղկացած էր հետեւեալ անդամներէն՝ Ս. Վրացեան նախագահ եւ արտաքին գործերու վարիչ, Ա. Յովհաննէսեան՝ զինուորական գործերու վարիչ, Կ. Սասունի՝ ներքին գործերու վարիչ, Հ. Տէրտէրեան՝ ելեւմտական գործերու վարիչ, Տէր Յակոբեան՝ պարէնաւորման վարիչ, Բժ. Ս. Եղիազարեան՝ խնամակալութեան վարիչ: Յետոյ աւելցան նաեւ Ա. Խոնդկարեանը՝ արդարադատութեան վարիչ, եւ բանակի ընդհանուր հրամանատար Գնդ. Կուռո Թարխանեանը:



# Սուրբ Սարգիս



Ս. Սարգիս գորավարի յիշատակութեան տօնը կը նշուի Սուրբ Զատիկէն 63 օր առաջ: Այս գորավարը կը համարուի երիտասարդ գոյգերու եւ սիրահարներու բարեխօսը:

Ըստ աւանդութեան, Սուրբ Սարգիսի տօնին նախորդող գիշերը աղջիկներ աղի բլիթ կ'ուտեն եւ կ'ակնկալեն իրենց երագին մէջ տեսնել իրենց ապագայ փեսացուն: Նաեւ ոմանք տան տանիքը կամ պատշգամը խարկած ալիւր կը դնեն եւ կը սպասեն, որ Սուրբ Սարգիս անցնի, ձիուն պայտերուն հետքը ձգէ ալիւրին մէջ եւ օրհնէ այդ տունը: Իսկ մուսալեոցիները այս տօնին առթիւ կը պատրաստեն «գումպու» կոչուող յատուկ եւ շատ համեղ գաթան:

# Տեառնընդառաջ

Ազգագրական սովորութիւններով հարուստ Տեառնընդառաջը կը նշուի Փետրուար 14ին: Ան կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի ծննդեան քառասուներորդ օրը:

Նախատօնակին՝ սովորութիւն է Հայաստանի բոլոր շրջաններուն մէջ խարոյկ վառելը եկեղեցոյ բակին մէջ: Քահանան ժամերգութիւնը կատարելէ ետք, թափօրով դուրս կու գայ եկեղեցիէն, վառուած մուկերով կրակ կու տայ դէզին, ապա շապիկ հագած երիտասարդները կը հետեւին քահանային: Կրակին շուրջը կը դառնան, ապա վրայէն կը ցատկեն: Վերջապէս, այդ կրակէն իրենց մուկերը վառելով կը վերադառնան տուն՝ լուսաւորելու իրենց օճախները եւ անկէ հետո պահելու չար ոգիները:



Հին ժամանակ, ոմանք կիսայրած փայտի կտոր մը կ'առնէին դէզէն, տուն տանելով ապահով տեղ մը կը պահէին, որպէսզի հաւերը առատ հաւկիթ ածեն եւ կամ կը նետէին խաշին մէջ, առատ հաց ունենալու մտադրութեամբ: Ուրիշներ ալ խարոյկի կրակէն վառած մուկերը տուն տանելով կը պահէին մինչեւ յաջորդ տարի:

Սովորութիւն էր նաեւ այդ մուկերուն պատրոյզին մուրը երիտասարդ աղջիկներուն աչքերուն քսել, աչքացաւէ հեռու ժապու մտադրութեամբ: Որոշ շրջաններու մէջ հիւանդները խարոյկին մօտ կը պահէին, հաւատալով թէ շուտափոյթ կ'ապաքինին: Վերջապէս, Տեառնընդառաջի տօնախմբութեան գլխաւոր կէտերէն մէկն է հրավառութիւնը, որ կը խորհրդանշէ լոյսի սփռումը եւ չարի խափանումը:

## Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմագէտ

1- Որ թուականին տեղի ունեցած է վարդանանց պատերազմը  
415 թ  
1451 թ  
1036 թ  
451 թ

2- Վարդանանց հերոսամարտի ժամանակ ո՞վ էր հայոց կաթողիկոսը:  
Մահակ Պարթեւ  
Յովսէփ Հողոցմեցի  
Խրիմեան Հայրիկ:

3- Ե՞րբ կ'ընկերացաւ Նուարսակի դաշնագիրը  
451-ին  
460-ին  
484ին

4- Ե՞րբ Հայաստանը վերջնականապէս բաժնուեցաւ Բիզանդական եւ Սասանեան կայսրութիւններուն միջեւ:  
301-ին:  
387-ին:  
451-ին:

5- Յիսուսի ծնունդէն քանի օր ետք կը յիշուի Տեառնընդառաջը  
15 օր ետք  
30 օր ետք  
40 օր ետք

6- Վաղարշ արքան ո՞ր դաշինք կ'ընկերացաւ հայոց հետ:  
Աւարայրի մէջ  
Նուարսակի մէջ  
Արեւմտեան Հայաստանի մէջ

7- Բարեկենդան կը նշանակէ.-  
Բարի վայելում:  
Բարի կեանք:  
Բարի մարդ:

8- Փետրուարեան Ապստամբութեան ժամանակ ժողովրդական շարժման անունն էր՝  
Վասն Հայրենեաց Փրկութեան Շարժում  
Հայրենիքի Ազատագրութեան Շարժում  
Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ

9- Ո՞վ էր Ղեւոնդ Երեց  
Քահանայ  
Մարգալտ  
Զինուոր

10- Ե՞րբ սկիզբ առաւ Փետրուարեան Ապստամբութիւնը  
1930 Մայիս 1  
1926 Յունիս 21  
1921 Փետրուար 18



Մանկապատանեկան Գործընկերը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Յեռածայն (514) 332-3757  
Յեռապատճէն (514) 332-4870  
Email: sylva@horizonweekly.ca

Թիւր պատրաստեց՝  
Յուշիկ Բարուճեան